# ԿԵՆՍԱԳՈՐԾԵՆՔ ՍՄԿԿ 27-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1986 թվականը նշանավորվեց երկու կարևորագույն քաղաքական և սոցիալ-տնտեսական իրադարձություններով՝ հունվարին կայացավ Հայաստանի Կոմկուսի 28-րդ համագումարը, իսկ փետրվարի 25-ից մինչև մարտի 6-ը՝ ՍՄԿԿ 27-րդ համագումարը: ՍՄԿԿ Կենտկոմի Գլխավոր քարտուղար Մ. Ս. Գորբաչովի քաղաքական զեկուցման մեջ հստակորեն նախանշված են կուսակցության տնտեսական և սոցիալական քաղաքականության հիմնական ուղղությունները, համագումարի են բերված ՍՄԿԿ ծրագրի նոր խմբագրության ու կանոնադրության մեջ կատարված փոփոխությունների քննարկման արդյունքները:

ՍՄԿԿ առջև դրված խոշոր պատմական կարևորություն ունեցող անհետաձգելի խնդիրը պահանջ է ներկայացնում մշակելու սկզբունքորեն նոր ստրատեգիական կուրս: ՍՄԿԿ 27-րդ և Հայաստանի Կոմկուսի 28-րդ համագումարների փաստաթղթերում ընդգծված է, որ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ինտենսիֆիկացիայի գլխավոր լծակը՝ գիտատեխնիկական առաջընթացի զարգացումն է, տեխնիկայի նոր սերունդների, սկզբունքորեն նոր տեխնոլոգիաների լայն ներդրումը, որոնք պետք է ապահովեն առավելագույն արտադրողականություն ու էֆեկտիվություն: Դրանում է հատկապես կայանում մեր հասարակության զարգացման ներկայիս բեկումնային ժամանակաշրջանի վճռորոշ քաղաքական ու տնտեսական խնդիրը: Արագացումը, նշեց ընկ. Մ. Ս. Գորբաչովը, դա «նախ և առաջ տնտեսական աճի տեմպերի բարձրացումն է: Բայց ոչ միայն դա: Նրա էությունը աճի նոր որակի մեջ է՝ գիտատեխնինական առաջընթացի հիման վրա արտադրության համակողմանի ինտենսիֆիկացիայի, տնտեսության ստրուկտուրային վերակառուցման, աշխատանքի կառավարման, կազմակերպման և խթանման էֆեկտիվ ձևերի կիրառման մեջ է»:

Համագումարը ցույց տվեց, որ արտադրության ինտենսիֆիկացիայի գլխավոր միջոցը գիտատեխնիկական առաջընթացն է, երկրի արտադրողական ուժերի տրամաբանական վերափոխումը: Ըստ որում, խոսքը վերաբերվում է գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումների հիման վրա ժողովրդական տնտեսության խորը վերակառուցմանը, դրանց առաջավոր ուղղություններում կատարվող ճեղքումներին, տնտեսական մեխանիզմի, կառավարման համակարգի, գիտության ու տեխնիկայի վերակառուցմանը: Այդ նպատակներով ՍՄԿԿ պլանավորում է ուշադրության կենտրոնը քանակական ցուցանիշներից տեղափոխել որակի և էֆեկտիվության կողմը, միջանկյալներից՝ վերջնական արդյունքներին, արտադրական ֆոնդերի ընդլայնումից՝ նրանց նորացմանը, վառելիքահումքային ռեսուրսների ավելացումից՝ դրանց օգտագործման բարելավմանը, գիտատար բնագավառների, արտադրական և սոցիալական ինֆրաստրուկտուրայի արագ տեմպերով զարգացմանը:

Համագումարն ընդգծեց ժողովրդական տնտեսության և արտադրության համար գիտության ու տեխնիկայի նվաճումների ավելի եռանդագին կենսագործման անհրաժեշտությունը:

ՍՄԿԿ 27-րդ համագումարի «ՍՍՀՄ տնտեսական և սոցիալական զարգացման 1986—1990 թվականների և մինչև 2000 թվականն ընկած ժամանակաշրջանի հիմնական ուղղությունների մասին» որոշման մեջ երկրաբանների առջև խնդիր է դրվում ապահովել երկրի հանքահումքային բազայի հետագա

ամրապնդումն ու ընդլայնումը, հասնել հանքային հումքի առավել լրիվ և համալիր օգտագործմանը, բոլոր օգտակար բաղադրամասերի կորզմանը: Ըստ ամենայնի օժանդակել անթափոն արտադրության զարգացմանը, հատկապես գործող լեռնարդյունահանող ձեռնարկություններում, բարձրացնելու քաղցրահամ ստորերկրյա ջրերի, սև և գունավոր մետալուրգիայի համար բարձրորակ հանքանյութերի, հանքային պարարտանյութերի և շինանյութերի, արտադրության այլ ճյուղերի համար անհրաժեշտ հումքի պաշարների հետախուզման և յուրացման նախապատրաստման էֆեկտիվությունը և որակը, արագացնել օգտակար հանածոների որոնման և հետախուզման առաջավոր մեթոդների ներդրումը, բարձրացնել օգտակար հանածոների հանքավայրերի կանխագուշակման և երկրաբանա-տնտեսական գնահատման գիտական հիմնավորման մակարդակը, լայնորեն կիրառել հետազոտման երկրաֆիզիկական և երկրաքիմիական մեթոդները, Երկրի մակերևույթի և նրա ընդերքի ուսումնասիրման օդանավային և տիեզերական միջոցները:

Կուսակցության տնտեսական ստրատեգիայի, հասարակական գիտակցության ձևավորման, նրա քաղաքականության իրագործման մեջ, նշված է համագումարի նյութերում, աճում է մամուլի, զանգվածային ինֆորմացիայի և պրոպագանդայի միջոցների դերը: Հարց է դրվում՝ ըստ ամենայնի ծավալել քննադատությունը և ինքնաքննադատությունը, ուժեղացնել պայքարը տոնականության դեմ, վճռականորեն կանխել առողջ քննադատությունը ճնշելու և հալածելու ամեն մի փորձ: Այդ որոշումների լույսի տակ մեր «Գիտություններ Երկրի մասին» Տեղեկագրի խմբագրական կոլեգիային խոշոր աշխատանք է սպասում, անհրաժեշտ է տպագրվող հոդվածների որակի նկատմամբ հանդես բերել խստապահանջություն, հասնել նրան, որ տպագրվեն միայն գիտական բարձր մակարդակ ունեցող հոդվածները: Անհրաժեշտ է նպաստել գիտական կարևորագույն պրոբլեմներին և նրանց չլուծված հարցերին նվիրված հոդվածների հանրապետության և նրան հարակից բնատարածքների երկրաբանությանը, երկրաֆիզիկային և աշխարհագրությանը նվիրված մենագրությունների և դասագրքերի վերլուծմանը և քննադատական գնահատմանը նվիրված նյութերի տպագրմանը և Տեղեկագրի էջերում գիտական բանավեճ ծավալել Երկրի մասին գիտությունների տարիներ շարունակ վիճելի հարցերի շուրջը:

Մեծ խնդիր է դրված բարձրակարգ մասնագետների պատրաստման բնագավառում, որի լուծմանը մեծապես կնպաստեր հանրապետությունում Երկրի մասին գիտությունների ասպարեզում թեկնածուական և դոկտորական աստիճաններ շնորհող մասնագիտացված Գիտական խորհուրդների ստեղծումը:

ՍՄԿԿ 27-րդ համագումարը կուսակցության, սովետական ժողովրդի համար կարևորագույն պատմական ուղենիշ է: Մեր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման, աշխարհում խաղաղության պահպանման գիծը համագումարի գլխավոր քաղաքական արդյունքն է հանդիսանում: Նրա նյութերը գտնվում են ամբողջ կուսակցության, սովետական ողջ ժողովրդի, աշխարհի հասարակայնության ուշադրության կենտրոնում: Նրա որոշումները կանխորոշում են առաջիկա տարիների և տասնամյակների մեր առաջընթացի թե բնույթը և թե տեմպերը:

# РЕШЕНИЯ XXVII СЪЕЗДА КПСС ПРЕТВОРИМ В ЖИЗНЬ

1986 год ознаменовался двумя важнейшими политическими и социально-экономическими событиями: в январе состоялся XXVIII съезд КП Армении, а с 25 февраля по 6 марта 1986 года—XXVII съезд КПСС. В Политическом докладе Генерального секретаря ЦК КПСС М. С. Горбачева четко очерчены основные направления экономической и социальной политики партии, подведены итоги обсуждения новой редакции Программы КПСС и изменений в ее Уставе.

Стоящая перед КПСС неотложная задача большой исторической важности требовала выработать принципиально новый стратегический курс. В документах XXVII съезда КПСС и XXVIII съезда КП Армении подчеркнуто, что главным рычагом интенсификации социально-экономического развития страны служит ускорение научно-технического прогресса, широкое внедрение техники новых поколений, принципиально новых технологий, обеспечивающих наивысшую производительность и эффективность. Именно в этом состоит ключевая политическая и хозяйственная задача на современном переломном этапе развития нашего общества. Ускорение, как отметил М. С. Горбачев, это «прежде всего повышение темпов экономического роста. Но не только. Суть его—в новом качестве роста: всемерной интенсификации производства на основе научно-технического прогресса, структурной перестройке экономики, эффективных форм управления, организации и стимулирования труда».

Съезд показал, что главным средством интенсификации производства является научно-технический прогресс, коренное преобразование производительных сил страны. При этом имеется в виду, что речь идет о глубокой реконструкции народного хозяйства на основе новейших достижений науки и техники, о прорывах на авангардных их направлениях, перестройке науки и техники хозяйственного механизма, системы управления. В этих целях КПСС планирует перенести центр внимания с количественных показателей на качество и эффективность, с промежуточных—на конечные результаты, с расширения производственных фондов—на их обновление, с наращивания топливно-сырьевых ресурсов—на улучшение их использования, на ускоренное развитие наукоемких отраслей, производственной и социальной инфраструктуры.

Съезд подчеркнул необходимость более энергично осуществлять поворот науки к нуждам народного хозяйства и повышение восприимчивости производства к достижениям науки и техники.

В постановлении XXVII съезда КПСС «Об основных направлениях экономического и социального развития СССР на 1986—1990 годы и на период до 2000 года» перед геологами ставится задача обеспечить дальнейшее укрепление и расширение минерально-сырьевой базы страны, добиваться более полного и комплексного использования минерального сырья с извлечением всех полезных компонентов, всемерно способствовать развитию безотходного производства, в особенности, действующих горнодобывающих предприятий, повышение эффективности и качества подготовки к освоению разведанных запасов пресных подземных вод, высококачественных руд для черной и цветной металлургии, сырья для производства минеральных удобрений и строительных материалов, ускорить внедрение прогрессивных методов поисков и разведки полезных ископаемых, повысить уровень научного обоснования прогнозов и геолого-экономической оценки месторождений полезных ископаемых, широко использовать геофизи-

ческие и геохимические методы исследований, аэровысотные и космические средства для изучения поверхности Земли и ее недр.

В осуществлении экономической стратегии партии, ее социальной политики в формировании общественного сознания, как отмечается в материалах съезда, возрастает роль печати, средств массовой информации и пропаганды. Ставится вопрос—всемерно развивать критику и самокритику, усиливать борьбу с парадностью, решительно пресекать любые попытки зажима здоровой критики, преследования ее. В свете этих решений редколлегии нашего журнала предстоит большая работа в деле повышения требовательности к качеству и научному уровню публикуемых статей. Необходимо способствовать публикации критических статей с развертыванием на страницах журнала широкой дискуссии по спорным вопросам наук о Земле. Следует отметить, что одним из упущений в публикациях журнала за последние годы было почти полное отсутствие статей по разбору и критике издаваемых монографических трудов и учебников по геологии, геофизике и географии республики и сопредельных территорий.

Большая задача стоит перед Отделением наук о Земле в области подготовки высококвалифицированных кадров. Нельзя примириться с тем, что в республике нет специализированного Совета по защите кандидатских и докторских диссертаций в области наук о Земле, что также является одним из препятствий в деле повышения квалификации научных работников.

XXVII съезд КПСС—историческая веха в жизни партии, советского народа. Принятая и утвержденная линия на ускорение социально-экономического развития страны, упрочение мира на Земле—главный политический итог съезда. Ход и результаты его работы—в центре внимания всей партии, советских людей, мировой общественности. Его решения определяют и характер, и темпы нашего движения на годы и десятилетия вперед.